ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

19.04.2013 N ԱԿ/06.2/4507-13
Ձեր N _____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 2013 թվականի ապրիլի 10-ի թիվ 197-ի 6 գրության հայտնում եմ, որ հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների, ներառյալ պարգևատրումների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է ethics.am կայքում: Ինչ վերաբերում է նախարարության մյուս աշխատողներին, ապա Ձեր կողմից պահանջվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 199 հոդվածի պահանջներից ելնելով՝ «աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները տրամադրվում կամ հրապարակվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ», հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաստիքացուցակի և պարգևատրումների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա կարելի է նույնականացնել աշխատողների ինքնությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

СЕКРЕТАРИАТ

Կատարող՝ Շուշանիկ Մուրադյան
ՀՀ ԱՆ հաշվապահական հաշվառման բաժին
Հեռ. 56-41-88